

ԲՈՅՍԵՐՈՒ ՀԱՅ ԱՆՈՒՆԵՐ

ԲԼԹԵՆԻ ԵՒ ՀԱՅՀԱՍԵՍ

ՆՈՐԱՅՐ ԲՈՒՋԱՆԴԱՅԻ ԻՐ « Հայկա- կան Բառարանութեան » մէջ կ'ապացու- ցանէ (տպագր. Կ. Պոլիս, 1880, տպ. Քերիշճեան) որ բլթենի կը նշանակէ Tri- gonella Fœnum græcum L. Քր. Fenugrec, լատ. Telis բառը, և ոչ թէ Տիրու գր. callosité, կոշկոտ, ինչպէս գրուած է Գաղիանոսի բառերուն մէջ և զոր կ'ընդունի նոյնպէս Հ. Մանուէլ Չախ- շահեան, նոր Հայկազեան Բառարանը, Առձեռն Բառարան, Էմիլեան:

Բլթենին կը կոչուի արար. հուլպէ, պարս. հիւլպէ, թրք. բոյ բոխումը, շում- պալիդ, շեկիյո. Քր. fenugrec, séné- grain սենեկրեկ: Արեւելքի մէջ իբրեւ մնունդ և իբրեւ դեղ կը գործածուի, Եւմէնի մէջ կ'ուտեն, գերցնող է:

Բլթենին տարեւոր բոյս է, թրթեռ- նազգիներու տոհմէն երեքնուկին (trèfle), առուշային (luzerne) պէս երեքձգի տե- րեւներ ունի, սպիտակ ծաղիկներ, մենաւոր կամ երկուական հատ, տերեւներուն ա- նութէն (aisselle) ծլած. պտուղները եր- կայն, գերանդիի պէս կ'որ են, տափակ կը պարունակեն 10-20 սերմ, քառակուսի, անկանոն, այս հատիկները կարծր են և մութ դեղնագոյն, համը լուրիայի, ոլոռի համին կը նմանի, հոտը ծանր է:

Հնդկաստանի մէջ տեղացիք կ'ուտեն հատիկները, սերմերը, երբ թարմ են ու մատղաշ:

Կը պարունակեն լիսիդին փոսփոր:

Բլթենին գերցնող է, զօրացուցիչ, Mignot կ'ըսէ թէ ձկան իւղի տեղ կը ծա- ւայէ. պէտք է հոտը անցընել և տնու- շահոտել (aromatiser). Իւրաքանչիւր ճաշի ատեն սուրճի զգալի մը չափով աւել աճուցով (confiture):

Ext. fl. di fenugrec 75 gr. Sp. écorces oranges amères 150 gr.

Ժամանակին յոյները իրենց գերինները կը սնուցանէին անոր հատիկներովը և անասունները անոնց կեղեւներովը, նոյնը կը կատարուի այսօր Եգիպտոսի մէջ ուր Բլթենի կը մշակեն: Բլթենիին ալիւրը կակուղցնող է, անութներու ծանր հոտը կ'անցընէ. կանանց ծննդական գործա- լանին մէջ Բլթենիի ալիւրի տոպրակիկները ղնելը այդ մասերուն բորբոքումները կ'ան- ցընէ. անկէ հանուած իւզը կը մաքրէ մազերը, կը դարմանէ մազերու թեփելը (pellicule):

ԱՄՓՈՓԵՆՔ. - Նորայր նոյն տունկը կը համարի բլթենին և հացհամեմ. սակայն այլ է բլթենի, այլ՝ հացհամեմ. հացհամեմն է nigelle կոչուած տունկը՝ որ թուրքերէն կը կոչուի լիօրէք օրու, արջնդեղ, սեւ գնդիկ. ոչ միայն Նորայր այլ և ուրիշներ շփոթած են այդ երկու բոյսերը:

Ամբրտովաթ « ԱՆԳԻՏԱՅ ԱՆՊԵՏ » ին մէջ կը գրէ. « Բլթենի որ է հացհամեմն որ է հապպաթ ըս սովտան ». Գէորգ Պա- լատեցի՝ որու պարսկերէն հայերէն բա- ռագիրքը հեղինակութիւն կը ներկայացնէ իր ճշգրտութեամբ՝ կը գրէ «ԱՆՔԻՇ, հաց- համեմ, արջնդեղ, սեւիճ (ե սեւագոյն մակ- րիկ ունդ գոր ցանեկ ի վերայ հացի) լիօրէք օրի, արաբերէն հապպէր իս սեփտա »:

Արջնդեղին, հացհամեմին ֆրանսերէնն է nigelle. Նորայր, Լուսինեան և այլք շփոթած են իրարու հետ nigelle և nielle:

Nigelle, արջնդեղ, հացհամեմ, սեւ գնդիկ, լիօրէք օրի. Nielle, caryophyllus ներու տոհմէն, որուն պատկերը դրած են Հայբուսակ և Հ. Քաջունի փոխանակ արջնդեղի պատկերին. Nielle-ը գիտական անունով կը կոչուի Lychnis Githago L. = Gith = Agrostis Githago և կ'ը բուսնի ցորենի արտերուն մէջ և խիտ զնասակար է զայն ուտելը թէ մարդուն և թէ անասուններուն, և զժուարին է ունդը՝ զատել ցորենէն:

Գակտ. ՅՈՎՀ. ԱՐԹԻՆԵԱՆ Առնուվիլ և Գոմէս:



ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ հրատարակուած Հան- դէս մը կը գրէ որ երկրին հիւսի- սային և հիւսիսային արեւմտեան լեռներու մէջ թթենի չգտնուելուն՝ շերամի որդերը կը սնուցուին Սիեմի մատղաշ ճիւղերով: Արդ սխալ է Սիեմ կոչել այն խոտը որ երկար ժամանակներէ հետէ Հայաստանի մէջ կ'աճի առատօրէն և կը կոչուի Խիւն, իսկական հայ անունով:

Խիւնձը՝ Բարդաճաղիկ (Synantherées) տարեւոր խոտ մըն է, գարնան կը բուսնի դեղին ծաղիկներով, որոնք զուրս կ'եւլեն մատղաշ ճիւղերու անութներէն. այդ ճիւ- ղերը կը պարունակեն անոյշ, համեղ կաթ մը՝ զոր տղաք դաշտերու մէջ կը ծծեն:

Խիւնձը որ ձմրան պատուական բանջա- րեղէն մը կը կազմէ իր արմատներով՝ Ակազեմիոյ զիտական աշխատակից Սար- զիսեանի ձեռքին տակ կը ստացուի խոշոր բոժոժներ և մեծաքանակ միտաքս: Խիւնձի զիտական անունն է Tragopogon arven- sis L. դաշտերու Խիւնձ, որ մշակուելով

կ'ունենանք Tragopogon sativa L. մշակուած Խիւնձ, ֆոլօրու. Tragopon լատիներէն կը նշանակէ ֆօշի մօրուք, նոյն նշանակութեամբ արաբերէն Լահիյէթ-իւթ- թիս. ունինք նոյնպէս գոգի նոր բառ մը: Խիւնձ՝ յիշուած է քանիցս հայ մատե- նագրութեան՝ ձեւագրի մէջ

« Աղևապոյ հին, որ քօլօրուս, որ բաքս սաքալի որ Խիւնձ, որ ալալօշանկ, որ սա- փալանը (բէլթէլ): ֆօշմօրուք, Խիւնձ, ա- լալուշան: Սարաքս (Taraxacum) կու- բանջար »:

« ֆօշմօրուց քամուկս, Ոսարալայիցէ իւթթիս որ Խիւնձի չոր կաթ որ չորա- ցնեն »:

Կալիֆոռնիոյ մէջ դպրոցական սղոց համար կը ջանան իբրեւ ծամոց (չուինկ ձրմ chuing zum) գործածել Խիւնձի կարմրացած նիւթը:

Խիւնձի մասին խօսած եմ « տունկերը և անոնց հայերէն անուններն գրքոյկիս » մէջ, որ առաջին անգամ երեցաւ Չօպանեանի « Անահիտին մէջ, յետոյ առանձին տետրա- կով »:

Գակտ. ՅՈՎՀ. ԱՐԹԻՆԵԱՆ Առնուվիլ և Գոմէս:

ՀԱՅ ՆԿԱՐՉՈՒՇԻ ՕՐ. ՄԱՅՏԱ ՄՆՏԻԿԵԱՆ

Հաճոյքով կը ծանօթացնենք « Բազմա- վեպ » ի ընթերցողներուն՝ հայ նկարչուհի Մայտա Մնտիկեանը: Միլանարնակ հայ օրիորդը վերջերս լայն յաջողութիւն գտած է իր տուած Յուցահանդէսով այդ քաղքին մէջ:

Հնգետասանամեայ հասակին նուիրուած նկարչութեան արուեստին, այսօր նէ իր

հոգեոյն բովանդակ խանդավառութեամբը, և գաղափարական մաքրութեամբը կ'ար- տազրէ գործեր՝ որոնք ուշագրաւ են: Նախ տազրէ գործեր՝ որոնք ուշագրաւ են: Նախ քան Միլանու մէջ իբր նկարչուհի իր հրատարակային յայտնութիւնը, Նիւ Եօրքի մէջ, ուր գացած էր 1948-ին իբր բու- մէջ, ուր գացած էր Օր. Մայտա րիսր, առարկայ դարձած է Օր. Մայտա տեղական մամուլի գնահատանքին: « Long

